ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 հունվարի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

8
(2674)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԱՆՓՈՒԹՈՒԹՅՈՒՆ, ՍԳԻ ԹԵՄԱՆ ՓԱԿԵԼՈՒ ՄՂՈՒՄ

2018 թվականի տարեսկզբին, երբ Նիկոլ Փաշինյանը դեռեւս ընդդիմադիր պատգամավոր էր եւ պատեհ-անպատեհ բոլոր առիթներով քննադատում էր բանակի վարքն ու բարքը, կենցաղավարությունը, առավել մեծ խանդավառությամբ խոսում բանակի զոհերի մասին, Ջինված ուժերում դժբախտ պատահարի՝ շմոլ գազից թունավորման հետեւանքով մահացած զինծառայողի միջադեպը սարսափ էր համարում: Վարչապետի աթոռը զբաղեցնող Փաշինյանը, սակայն, ոչ միայն սարսափ որակումը չի տալիս Գեղարքունիքի մարզում տեղի ունեցած ողբերգական, 15 ժամեկտայինի կյանք խլած միջադեպին, այլեւ արագարագ, ոտքի վրա ցանկանում է առանց նախաքննության ավարտի ու միջադեպի բոլոր հանգամանքների պարզաբանման առաջինը հայտնել, թե ինչ է կատարվել զորամաս համարվող հյուղակում, որտեղից փրկվել են 3 հոգի, սակայն ի վիճակի չեն խոսել: 2023-ի տոնական միջոցառումների վրա միլիոնավոր դոլարներ են ծախսվել, բայց սահմանը պաշտպանող ու երկրի անվտանգությունը հսկող 18-ամյա զինվորը տանն անգամ չնմանվող ինչ-որ կացարանում է բնակվում: Թերեւս սա՛ է Նիկոլ Փաշինյանի պահած բանակի երեսը: 2 տարի առաջ, երբ ԱԺ ՄԻՊ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանն ահազանգում էր առաջնագծի կահավորանքի մասին, Փաշինյանը գլուխ էր գովում, թե արվում է ամն բան, սակայն գաղտնի: Իրականում կառավարության անդամները, իշխանական պատգամավորներն ու ՔՊ-ական ամենատարբեր չինովնիկները շտապում են հավելավճարներ ստանալ, «վոյաժների» մեկնել ու գերթանկարժեք հարսանիքներ, կնունքներ, ծնունդներ կազմակերպել, բայց նույն այդ պահին իշխանությունը, մեկ-երկու երկրորդական պաշտոն զբաղեցնող զինվորականի աշխատանքից ազատելով, շտապում է փակել 15 ընտանիքի սգատեր դարձնելու անչափ ցավոտ թեման: Եթե իշխանությունն ինչ-որ կերպ այս ամենը կարողանար «նախկիններին» հետ կապել, ապա, վստահեցնում ենք, առանց վարանելու մեղքն իր վրայից նրանց վրա կգցեր ու հանգիստ շունչ քաշելով՝ նորից կսկսեր բանակին ելակ հրամցնելու մասին անդուլ եւ անդուր տեքստերը հրապարակ բերել:

«Շատ անհաջող միջադեպ էր»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այսպես արձագանքեց ՀՀ-ում ԵՄ դեսպան, ԵՄ պատվիրակության ղեկավար Անդրեա Վիկտորինը՝ խոսելով հունվարի 17-ին Արցախի ճանապարհին տեղի ունեցած միջադեպի մասին: Խոսքն այն դեպքի մասին է, երբ ադրբեջանցի «էկոակտիվիստներն» Արցախի ճանապարհին կանգնեցրել էին ռուս խաղաղապահների ուղեկցությամբ երեխաներին տեղափոխող ավտոբուսը, ներս մտել, սարսափեցրել անչափահասներին: ԵՄ դեսպանից, մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց, թե ինչ է մտածում դեպքի մասին. չէ՞ որ, ի վերջո, շատ միջազգային կոնվենցիաներ են խախտվել, անգամ այդ պահին երեխաներից մեկն ուշաթափվել է: Ի պատասխան՝ տիկին դեսպանը նշեց. «Դա շատ անհաջող միջադեպ էր, բայց ԵՄ-ն ակտիվ է ընդհանուր առմամբ. մենք փորձում ենք լուծել խնդիրը, համոզված ենք՝ միջանցքը պետք է բացվի, պետք է մարդկանց եւ ապրանքների ազատ մուտք լինի, մենք դիվանագիտական հարաբերություններ ունենք եւ փորձում ենք լուծել խնդիրը»: Մեր ճշտող հարցին՝ իսկ ինչ կասի Արցախի երեխաների ոտնահարված իրավունքների մասին, տիկին Վիկտորինը նշեց. «Կարծում եմ՝ արդեն ասացի. մենք փորձում ենք դիվանագիտական լուծում գտնել»: Իսկապես մտահոգ էր ՀՀ-ում ԵՄ դեսպանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 15 զինծառայողի կյանք խլած հրդեհի դեպքով սպասվում է կալանավորումների շարք: ՊՆ-ում ներքին քննարկում է եղել, որի ժամանակ նշվել է, որ հեռացումներն առաջին քայլը կլինի, որից հետո կսկսվեն կալանավորումները: Նշենք, որ երեկվա ողբերգական դեպքով աշխատանքից ազատվել են 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Վահրամ Ֆրունզի Գրիգորյանը, կորպուսի շտաբի պետ-կորպուսի հրամանատարի տեղակալ, գնդապետ Միհրան Սերգեյի Մախսուդյանը, 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ թիկունքի եւ ԿՇԾ գծով, թիկունքի պետ, գնդապետ Շիրազ Գեւորգի Խաչատրյանը, հրամանատարի մարտական հերթապահության գծով տեղակալ, գնդապետ Արթուր Սերժիկի Օհանյանը, ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության հրդեհային անվտանգության ծառայության պետ, գնդապետ Սարգիս Ռոբերտի Մազմանյանը: Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի զորամասում տեղի ունեցած հրդեհի կապակցությամբ, պաշտպանության նախարարի հրամանով, աշխատանքից կազատվեն նաեւ բրիգադի շտաբի պետ-հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Ռուդիկ Էդիկի Հակոբյանը, բրիգադի հրամանատարի տեղակալ թիկունքի եւ ԿՇԾ գծով, փոխգնդապետ Գոռ Սերգոյի Աղեկյանը, բրիգադի ինժեներական ծառայության պետ, կապիտան Տիգրան Նվերի Ղազարյանը, բրիգադի ինժեներասակրավորային վաշտի հրամանատար, կապիտան Գոռ Գեղամի Սարգսյանը:

Գեղարքունիքի մարզում գտնվող զորամասի կացարանում բռնկված հրդեհը պատճառ դարձավ, որ կառավարության նիստի օրակարգում ընդգրկված հարցերը չզեկուցվեն եւ չքննարկվեն: Օրինակ՝ այդ հարցերից մեկով ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանի անվամբ ներկայացված էր «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում կատարելու մասին հարցը: Այս նախագծով ՆԳՆ-ն բյուջեից լրացուցիչ գումար է ուզում՝ անհրաժեշտ թվով 50 հաստիքների պահպանման ծախսերի ֆինանսավորման համար, քանի որ, հիմնավորման համաձայն, նախատեսված հատկացումների անբավարարության հետեւանքով լրացուցիչ միջոցներ նախատեսելու անհրաժեշտություն է առաջացել: Նշվում է, թե «Ներքին գործերի նախարարության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի եւ վերահսկողության իրականացում» միջոցառման գծով ՀՀ պետական բյուջեով հատկացումներ առկա չեն, քանի որ օրենքն ուժի մեջ է մտել 2022թ. դեկտեմբերի 30-ին: Նկատենք, որ ՆԳՆ-ն ունենալու է 50 հաստիքային միավոր, եւ, ըստ հաշվարկների, ամսական կպահանջվի 2 մլն 124 հազար դրամ, տարեկան 25 մլն 488 հազար դրամ, սակայն ներկայացված նախագծով առաջարկվում է ապահովել 6 ամսվա գումարը, որը կազմում է 12 մլն 744 հազար դրամ:

ՀՐԴԵՀ

ՊԵՏՔ Է ԴԱՏՎՈՂՆԵՐ ԼԻՆԵՆ

«Միացյալ Հայաստան» կուսակցության նախագահ Երվանդ Թարվերդյանի համար անհասկանալի է՝ ինչպես է հնարավոր, որ ժամկետային զինծառայողը խաղաղ պայմաններում վառվի, մոխրանա:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Երվանդ Թարվերդյանն ասում է՝ կատարվածի մասով որեւէ բացատրություն ու պատճառաբանություն իր համար ընդունելի չէ:

Զարմանում է՝ պաշտպանության ու ներքին գործերի նախարարներն ինչ էին անում կառավարության այսօրվա նիստին, ինչու դեպքի վայրում չէին:

Ողբերգական իրադարձությունից հետո, վստահ է, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը պետք է իր իսկ ձեռքով հրաժարականի դիմում գրեր, սակայն երեկ կառավարության նիստ էր, որին մասնակցում էր անձամբ Սուրեն Պապիկյանը՝ դեպքի վայր մեկնելու փոխարեն:

Նշենք, որ պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ 2023 թվականի հունվարի 19-ին՝ ժամը 05:15-ին, ՀՀ ՊՆ N զորամասից Վարդենիսի ռազմական ոստիկանության բաժին հեռախոսագիր է ստացվել, որ նույն օրը՝ ժամը 01:30-ի սահմաններում, նշված զորամասի Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված շինության ներսում վառարանը ավտոբենզինով վառելու ընթացքում հրդեհ է բռնկվել:

Հրդեհի հետեւանքով անձնակազմից 15 պարտադիր ժամկետային զինծառայողներ մահացել են: Նույն զորամասի վեց պարտադիր ժամկետային զինծառայողներ եւ մեկ սպա մարմնական վնասվածքներով ժամը 02:00-ի սահմաններում տեղափոխվել են Գեղարքունիքի կայազորային հոսպիտալ:

-Պարոն Թարվերդյան, Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում գտնվող զինվորների կացարանում բռնկված հրդեհի հետեւանքով զոհվել է 15 զինվոր, եւս 7-ը՝ վիրավորվել: Ի՞նչ կարող եք ասել կատարվածի եւ այն հանգամանքի մասին, որ հրաժարականներ եղան, բայց ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը շարունակում է պաշտոնավարել:

-Ո՞նց կարող է մարդ իր զորամասում խաղաղ պայմաններում վառվի ու այրվի: Ես որեւէ բացատրություն չեմ ընդունում ոչ մեկից, այսպես ասեմ:

-Կառավարության այսօրվա նիստի ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն առաջինը իր շուրթերով հայտարարեց, թե ինչ է կատարվել այն դեպքում, երբ նախաքննություն կամ որեւէ գործողություն չի ավարտվել: Հնարավո՞ր է այսպես՝ հանպատրաստից հայտարարել, թե ինչն է զորամասի կացարանում հրդեհի պատճառ եղել:

-Ես չեմ ընդունում այդ հայտարարությունն ու իր այդ հանգիստ մոդելը, որ կարելի է 15 զոհ եւ եւս 7 վիրավոր ունենալ ու առանց բացահայտման: Նախ, ես ամենաառաջինը զարմացա, որ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը մասնակցում էր նիստին, այլ ոչ թե դեպքի վայրում էր: Ամենամեծ զարմանքներից մեկը դա էր, որ ՀՀ պաշտպանության եւ ներքին գործերի նախարարներ Սուրեն Պապիկյանն ու Վահե Ղազարյանը կառավարության նիստին էին. փոխարենը պետք է լինեին Գեղարքունիքի մարզում: Ներքին գործերի նախարարը նաեւ պատասխանատու է այդպիսի իրավիճակների համար, քանի որ Փրկարար ծառայությունը եւս այդ կառույցի կազմում է արդեն, եւ պաշտպանության նախարարն էլ խաղաղ պայմաններում 15 զոհ ունի ու իր հերթին զեկուցում է: Իր հերթին էլ վարչապետն է երկրի փորձում բացատրություններ գտնել, ասում է, թե սպան է բենզինով շիշը նետել կացարանի վրա, ու այդ ամենը՝ հանգիստ տոնով: Աշխարհում ամենամեծ արժեքը մարդու կյանքն է: Մեզ մոտ չի արժեւորվում, չգիտես՝ ինչու: «Սուրմալու»-ի դեպքում 16 հոգի զոհվեց, սեպտեմբերյան դեպքերին 200 հոգի զոհվեց, 44-օրյա պատերազմի ժամանակ մոտ 5000, եւ այդ ամենի մասին ասվում է հանգիստ տոնով: Այդ մարդիկ պատկերացնո՞ւմ են, որ իրենց ընտանիքի անդամներն այդպես վառվեին կացարանում, նրանք էլի հանգիստ կլինե՞ին: Պարզ է, որ չէ:

-Մի քանի զինվորականներ արդեն ազատվել են պաշտոնից: Սա հարցի լուծո՞ւմ է:

-Գիտեք , ասել եմ՝ մեր կառավարման սխալն այն է, որ իրենք ֆուտբոլի նման են կառավարում, այսինքն՝ թիմով եկել ենք, մենք մեղավոր ենք, բայց ուրիշն է հրաժարական տալիս: Պաշտպանության նախարարն ինքը պետք է հրաժարական տար, այլ ոչ թե իրեն ասեին՝դու հեռացիր: Նա պետք է հեռանա, իսկ շատերը պետք է դատվեն:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ

Գեղարքունիքի մարզի Ազատ համայնքում տեղի ունեցած ողբերգական դեպքին անդրադարձել են նաեւ Ազգային ժողովի խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունները եւ պաշտոնական հաղորդագրություն տարածել:

«ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում տեղի ունեցած ողբերգությունը պետական կառավարման համակարգի փլուզման, Զինված ուժերում առկա բարձիթողի վիճակի եւ ռազմաքաղաքական իշխանության՝ բանակի նկատմամբ ցուցաբերած հանցավոր անտարբերության հետեւանք է:

Հայաստանի այս իշխանությունը մեր ժողովրդին միայն մահ ու աղետ է բերում, իսկ գլխատված բանակի պայմաններում, ցավոք, այսպիսի ողբերգությունները մեր իրականության մեջ անխուսափելի են դարձել: ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցությունն իր ցավակցություններն է հայտնում զոհված 15 զինծառայողների ընտանիքներին, մտերիմներին եւ ծառայակից ընկերներին, իսկ վնասվածքներ ստացած զինծառայողներին մաղթում շուտափույթ ապաքինում: ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցությունը հետամուտ է լինելու ողբերգության իրական մեղավորներին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու հարցում», -ասվում է «Պատիվ ունեմ» խմբակցության տարածած հաղորդագրությունում:

Իսկ «Հայաստան» դաշինքի տարածած հաղորդագրությունում ասվում է. «ՀՀ զինված ուժերում արձանագրվեց հերթական, միաժամանակ՝ արտառոց աղետը, որի հետեւանքով հրդեհի զոհ է դարձել 15 զինծառայող, կան վիրավորներ: Մեր խորին ցավակցություններն ենք հայտնում զոհերի ընտանիքներին, մտերիմներին եւ մեր ժողովրդին: Արագ ապաքինում ենք մաղթում վնասվածքներ ստացած զինծառայողներին: Միաժամանակ, ցավով արձանագրում ենք, որ նման ողբերգական դեպքը հերթական անգամ ապացուցեց իշխանության քաղաքական պատասխանատվության բացակայությունը եւ մշտապես հնչեցված ահազանգերի իրական լինելը՝ փաստելով բանականաշինության գործում խայտառակ անմխիթար վիճակը, մեր Զինված ուժերի առանձին հատվածների տեղակայման, բնակավորման եւ զորքերի ծառայության կազմակերպման պայմանների, մարտական առաջնագծի բազմաթիվ հատվածների կահավորվածության ու ինժեներական ենթակառուցվածքների բացերը»:

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողները այսօր՝ ժամը 12-ին, բողոքի ակցիա են իրականացնելու Քննչական կոմիտեի շենքի մոտ: Մեզ հայտնի դարձավ, որ ակցիայի նպատակը սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր»-ի միջադեպի դեպքով քննության խայտառակ դանդաղ ընթացքն է ու առերեսումների կասեցումը: Այսօր լրանում է միջադեպի 5 ամիսը, ու որեւէ մեկը պատասխանատվություն չի կրել:

Հիշեցնենք, որ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում տեղի ունեցած խայտառակ միջադեպով հարուցվեց քրեական գործ: Անցել է 5 ամիս, եւ մինչ օրս քրեական վարույթով որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել: ՀՀ նախկին ոստիկանապետ, ներկայումս ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը ոչ միայն հրաժարական չտվեց, այլեւ պաշտոն ստացավ եւ այս պայմաններում էլ դատի է տվել ծնողներին, պահանջում է վարչական պատասխանատվության ենթարկել:

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԸ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ

Օտարերկրացիները Հայաստանում կկարողանան առանց լիցենզիա ստանալու բիզնես գործունեությամբ զբաղվել: Օտարերկրյա ընկերությունները պարզեցված ընթացակարգով կկարողանան զբաղվել միայն բիզնեսի որոշ տեսակներով. դրանք են՝ մասնավոր պահնորդական գործունեություն, փոստային կապի գործունեություն, երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպում, ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղեւորափոխադրումների իրականացում, տաքսի ծառայություն, շինարարության իրականացում, շինարարության որակի տեխնիկական հսկողություն, ինժեներական հետազննում, շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն եւ այլն: Մեզ հայտնի դարձավ նաեւ, որ այս կարգի գործողությունը տարածվելու է Եվրասիական տնտեսական միության, Եվրոպական միության անդամ երկրների, ինչպես նաեւ ԱՄՆ-ի, Կանադայի, Հարավային Կորեայի, Չինաստանի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետության իրավաբանական անձանց վրա: Նշենք, որ այս մասին որոշման նախագծի հեղինակն էկոնոմիկայի նախարարությունն է: Բայց, մյուս կողմից, փորձագիտական համայնքն է սկսել մտահոգվել՝ այս թեմայի հետ կապված: Շատերը կարծում են, որ այս նախագծի՝ կյանքի կոչվելուց հետո Իրանում բնակվող հազարավոր ադրբեջանցիներ կարող են գալ ՀՀ ու այստեղ զբաղվել ուղեւորափոխադրմամբ, շինարարությամբ կամ մեկ այլ բիզնեսով: Արդյոք վերահսկողություն կլինի, թե ոչ, ցույց կտա ժամանակը: Իսկ մինչ այդ տեղեկացնենք, որ նախորդ տարվա ընթացքում Հայաստանում օտարերկրացիների կողմից գրանցվել է ավելի քան 3000 իրավաբանական անձ: Օտարերկրացի անհատ ձեռնարկատերերի թիվը հասնում է 5000-ի: Նշենք, որ նրանք հիմնականում Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ են, որոնք գործունեություն են ծավալում տեղեկատվական տեխնոլոգիաների եւ առեւտրի ոլորտներում:

ԲԱԶՄԱԹԻՎ ՀԱՐՑԵՐ

Գիշերը Գեղարքունի մազրում տեղի ունեցած ողբերգական միջադեպից հետո, ինչի պատճառով ժամկետային 15 զինծառայող է մահացել, ArmLur.am-ի տեղեկություններով՝ իրավապահ համակարգի ներկայացուցիչներն աշխատում են դեպքի վայրում, փորձում պարզել դեպքի հետ կապված բոլոր մանրամասները:

ArmLur.am-ը գրել էր, որ, ըստ իրավապահների առաջ քաշած նախնական վարկածի, վաշտի հրամանատարը բենզինը լցրել է վառարանի մեջ, ինչից հետո կրակից նաեւ ձեռքն է բռնկվել, ու վախենալով իրավիճակից՝ ձեռքի՝ բենզինով լի շիշը շպրտել է տան մեջ, ինչից հետո էլ պայթյուն ու հրդեհ է բռնկվել:

ArmLur.am-ի տեղեկությունը կառավարության նիստի ժամանակ անձամբ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հաստատեց, սակայն եթե անգամ նախնական այս վարկածը մոտ է իրականությանը, միեւնույնն է, հարցեր են առաջանում:

Նախ՝ ինչպե՞ս է ստացվում, որ վաշտի հրամանատարը վառելիքի հետ վարվելու տարրական գիտելիքներ չունի ու չգիտի, որ բենզինը խիստ հրավտանգ է:

Երկրորդ՝ հրդեհի բռնկումից հետո զինծառայողներն ինչո՞ւ չեն կարողացել վազել, փախչել, դուրս գալ շինությունից ու փրկվել:

Երրորդ՝ ծխի փոքր քանակության առկայության դեպքում անգամ բոլոր տեսակի շինություններում պետք է հակահրդեհային համակարգն աշխատի: Եղե՞լ է արդյոք հակահրդեհային համակարգ, գործե՞լ է այն, թե՞ ոչ:

Չորրորդ՝ շինության ներսում եղե՞լ է արդյոք տարհանման սխեմա, ու դրան արդյոք ծանո՞թ են եղել զինվորները, ըստ որի էլ կկարողանային լքել շինությունը:

Հարցերի շարքն իհարկե կարելի է շարունակել…

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

Հունվարի 16-ին Դիլիջան համայնքի ավագանու որոշմամբ՝ Դիլիջան համայնքի ավագանու՝ 2022 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 236-Ա «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ենթակայությամբ համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եւ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշման թիվ 4 եւ թիվ 5 հավելվածներում կատարվել են փոփոխություններ. թիվ 4 եւ թիվ 5 հավելվածների 14-րդ տողում պարուսույցի դրույքաչափը «125000» -ի փոխարեն պետք է կարդալ «105000»: 2022թ. դեկտեմբերի 1-ին, ավագանու որոշմամբ, Դիլիջանի համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի աշխատավարձը 2023 թվականի համար սահմանվել է ամսական 465 հազար դրամ:

ՊԱՀԱՆՋ

ԵԽ–Ն ԲԱՆԱՁԵՎ Է ԸՆԴՈՒՆԵԼ

Եվրախորհրդարանն երեկ քվեարկությամբ մերժել է Լաչինի միջանցքի հարցով բանաձեւի լրամշակումները եւ այդպիսով ընդունել է ամբողջ բանաձեւը, որով Ադրբեջանին կոչ է անում անհապաղ բացել Արցախը Հայաստանի հետ կապող միակ ճանապարհը եւ կանխել մարդասիրական աղեսը:

Եվրամիության օրենսդիր մարմնի ներկայացուցիչները դատապարտում են նաեւ ռուս խաղաղապահների անգործությունը, ՄԱԿ-ին կամ ԵԱՀԿ-ին կոչ են անում փաստահավաք առաքելություն գործուղել Լաչինի միջանցք եւ հորդորում կողմերին վերսկսել խաղաղության բանակցությունները: Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստում մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության խախտման դեպքերին նվիրված լսումների շրջանակում տեղի է ունեցել քննարկում «Լեռնային Ղարաբաղում շրջափակման մարդասիրական հետեւանքները» թեմայով:

Պատգամավորները կազմել են բանաձեւի նախագիծ, որով Ադրբեջանին կոչ են անում անհապաղ դադարեցնել Արցախը Հայաստանի հետ կապող միակ ճանապարհի արգելափակումը, հետագայում ձեռնպահ մնալ Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ տրանսպորտային, էներգետիկ եւ հաղորդակցական կապերը խափանելու գործելակերպից, դատապարտում են ռուս խաղաղապահների անգործությունը, ՄԱԿ-ին կամ ԵԱՀԿ-ին կոչ են անում փաստահավաք առաքելություն գործուղել Լաչինի միջանցք եւ հորդորում են կողմերին Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների հիման վրա վերսկսել խաղաղության բանակցությունները:

Երեկ ելույթ են ունեցել տասնյակ օրենսդիրներ, եւ, առանց բացառության, նրանցից յուրաքանչյուրը խստորեն դատապարտել է թե՛ կեղծ բնապահպանական կարգախոսներով ճանապարհը փակելու ադրբեջանական կողմի գործելակերպը եւ թե՛ ճանապարհի անվտանգությունը ստանձնած ռուսական կողմի անգործությունը:

Հարավային Կովկասի հետ հարաբերությունների պատվիրակության ղեկավար Մարինա Կալյուրանդը Բաքվին կոչ է արել դադարեցնել շրջափակումը եւ այդպիսով կատարել 2020թ.-ի նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնությունը:

«120 հազար հայեր ապրում են բլոկադայի պայմաններում, հարյուրավոր ընտանիքներ չեն կարողանում միավորվել: Երեխաները չեն գնում դպրոց, մարդիկ զրկվում են պարենից եւ տարրական կարիքները հոգալու հնարավորությունից»,- ասել է Կալյուրանդը:

Բոլոր ելույթներն ավարտվել են Բաքվին ուղղված նույն պահանջով՝ «Հենց հիմա բացե՛ք միջանցքը»:

Նատալի Լուազոն Ֆրանսիայից «էթնիկ մաքրազտում» է անվանել Իլհամ Ալիեւի ռեժիմի քաղաքականությունը:

Բերտ-Յան Ռուիսենը Նիդերլանդներից նշել է, որ ռուս խաղաղապահները Լաչինի միջանցքում իրենց պարտավորությունները չեն կատարում, եւ առաջարկել է ավելացնել դիտորդների թիվը:

Ռոբերտ Հայշելը Սլովակիայից ասել է, որ Արցախում սկսվում է մարդասիրական աղետ, որը կասեցնելու միակ ուղին ճանապարհի ապաշրջափակումն է եւ բանակցությունների վերսկսումը:

Իտալացի Ֆաբիո Կաստալդոն էլ կոչ է արել միջանցքը չբացելու պարագայում պատժամիջոցներ սահմանել Ադրբեջանի նկատմամբ:

Վերջին բանախոսն Ուրսուլա ֆոն դեր Լայենի ղեկավարած Եվրոպական հանձնաժողովում տրանսպորտի հարցերով հանձնակատար Ադինա-Յոանա Վալեան էր:

Նա ասել է, որ Եվրամիությունն անցյալ տարվա դեկտեմբերին՝ Լաչինի միջանցքի արգելափակման առաջին օրերից, ուշադրությամբ հետեւում է իրավիճակին: Նա նշել է միջանցքը բացելու կարեւորությունը եւ ասել, որ տեղում հիմա միայն Կարմիր խաչն է աշխատում:

Վալեան առաջարկել է վերսկսել խաղաղության բանակցությունները եւ դրանց միջոցով լուծել կողմերին մտահոգություն պատճառող բոլոր հարցերը:

Արցախից հաստատում են, որ Ղարաբաղի իշխանությունների ներկայացուցիչները հանդիպում են ունեցել Ադրբեջանի ներկայացուցչի հետ: Այդ մասին երեկ հայտարարել էր Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը: Ըստ նրա՝ հանդիպմանը ներկա է եղել ռուսական խաղաղապահ առաքելության հրամանատար Վոլկովը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԴԵՄ

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահները նախագահ Ջո Բայդենի ադմինիստրացիային կոչ են արել առավելագույն ճնշում գործադրել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի վրա, որպեսզի վերջ դրվի Արցախի շրջափակմանը, քանի դեռ ներկա ճգնաժամն այնտեղ աղետալի չի դարձել: Ինչպես նշել են կոնգրեսականները, հարկավոր է, որպեսզի Բայդենի ադմինիստրացիան առավելագույն ճնշում գործադրի՝ դադարեցնի Ադրբեջանին ցանկացած տեսակի ռազմական աջակցություն, ադրբեջանական ղեկավարության դեմ պատժամիջոցներ կիրառի շարունակվող ռազմական հանցագործությունների համար, օդային ճանապարհով անհապաղ մարդասիրական օգնություն հասցնի Արցախի ժողովրդին:

Կոնգրեսականները նաեւ նշել են, որ ԱՄՆ-ն պետք է դիտարկի Արցախին մարդասիրական օգնություն հասցնելու բոլոր հասանելի տարբերակները՝ ներառյալ օդային ճանապարհով բեռներ հասցնելը:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՉԻ ՏԱԼՈՒ

Երեկ՝ վաղ առավոտից, երբ պարզ դարձավ, որ հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում, որի հետեւանքով եղան 15 զոհ եւ 3 վիրավոր, հասարակական-քաղաքական շրջանակի շատ ներկայացուցիչներ պահանջեցին նաեւ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հրաժարականը: Այս պահի դրությամբ ՊՆ-ում ազատումներ կան, սակայն նախարարը դեռ իր պաշտոնին է:

Եվ, ահա, ArmLur.am-ի տեղեկություններով՝ Սուրեն Պապիկյանը հրաժարական չի տալու: Բանն այն է, որ ՔՊ-ի ներսում վստահելի մարդ չեն կարողանում այլեւս գտնել, որ Սուրեն Պապիկյանի տեղը նրան նշանակեն:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հրամանագիր է ստորագրել. «Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 133-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 35.1-ին հոդվածի 1-ին մասի եւ 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

Գարեգին ՊՈՂՈՍՅԱՆԻՆ նշանակել 2-րդ բանակային կորպուսի հրամանատար»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԲՌՆԿՎԱԾ ՀՐԴԵՀԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Երեկ տեղի ունեցավ ՀՀ կառավարության հերթական նիստը, որը վարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նիստի մասնակիցները՝ վարչապետի գլխավորությամբ, հոտնկայս հարգանքի տուրք են մատուցել հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում բռնկված հրդեհի պատճառով զոհված զինծառայողների հիշատակին:

Վարչապետ Փաշինյանն անդրադարձել է ողբերգական դեպքի մանրամասներին, պատասխանատուների կողմից ներկայացվել են պարզաբանումներ: Ստորեւ ներկայացվում է սղագրությունն ամբողջությամբ.

Վարչապետ Նիկոլ Փաշինյան

«Հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ ժողովուրդ, գիշերը հրեշավոր դեպք է տեղի ունեցել. Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված՝ Պաշտպանության նախարարության զորամասի կացարանի հրդեհի հետեւանքով զոհվել է 15 զինծառայող: Իհարկե, գիշերվանից աշխատում ենք՝ դեպքի հետ կապված, Պաշտպանության նախարարի հետ մասնավորապես: Պարոն Պապիկյան, ներկայացրե՛ք նախնական տվյալը՝ ինչ է տեղի ունեցել»:

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյան

«Պարոն վարչապետ, նախնական տվյալներով՝ մասնավորապես՝ Ռազմական ոստիկանության հայտնած նախնական տվյալների համաձայն՝ հրդեհային անվտանգության կանոնների խախտման արդյունքում տեղի է ունեցել բռնկում, որի ժամանակ օգտագործվել է նաեւ արգելված միջոց: Խոսքը վերաբերում է ավտոբենզինին, որը հնարավոր չի եղել հետագայում ուղղակի մարել:

Վարչապետ Նիկոլ Փաշինյան

«Բնականաբար, այն բանից հետո, երբ պարզ էր արդեն անշրջելի հետեւանքների վերաբերյալ, առաջին հարցը, որ ծագում էր, հետեւյալն է. պետք է պարզաբանել՝ ով եւ ինչ չի արել: Պիտի արձանագրեմ, որ մենք պարզեցինք հետեւյալը, չնայած պարզելու շատ բան էլ չկար. ինչպես նախարարը նշեց, պարոն Քյարամյան, Դուք է՛լ եք հաստատում, Քննչական կոմիտեի տվյալներով է՛լ է, որ մեծ քանակությամբ բենզին է օգտագործվել, որը բռնկվել է եւ հնարավոր չի եղել մարել:

Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյան

«Այո, պարոն վարչապետ: Գիշերը՝ ժամը 01:30-ի սահմաններում, Պաշտպանության նախարարության զորամասերից մեկի մեկ վաշտի տեղակայման վայրում հրդեհ է բռնկվել, դեպքի առթիվ հարուցվել է, նախաձեռնվել է վարույթ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 532-րդ հոդվածի 4-րդ մասով, այն է՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող նյութերի հետ վարվելու կանոնների խախտում, որն անզգուշությամբ առաջացրել է երկու եւ ավելի անձի մահ: Դեպքի վայրում են գտնվում քննչական խմբի անդամները, որոնք ողջ գիշեր աշխատել են: Ներգրավվել են նաեւ փորձագետներ, եւ կա նախնական վարկած առ այն, որ հրդեհը տեղի է ունեցել ջեռուցման հետ կապված հարցում անվտանգության կանոնների խախտման պատճառով: Դա նախնական վարկածն է, որն այս պահի դրությամբ բավական հիմնավորվել է»:

Վարչապետ Նիկոլ Փաշինյան

«Շատ լավ: Պարզել ենք նաեւ, որ, ըստ էության, Ներքին գործերի նախարարության հրշեջ ծառայությունը պատշաճ ժամանակում հասել է, բայց, իհարկե, հեռավորությունը բավական մեծ է եղել, եւ այդ հեռավորության պայմաններում պատշաճ ժամկետում տեղ է հասել: Բայց ուզում եմ շարունակել միտքը. պարզել ենք, որ 2022 թվականի դեկտեմբերի 21-ին Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ստորագրել է 14 ԳՇ կարգադրությունը հետեւյալ վերնագրով՝ «Զինված ուժերի զորամասերում տեղի ունեցած հրդեհների եւ դրանց կանխարգելման մասին», եւ հստակ հրահանգավորել է, հրաման է տվել, թե ինչ պետք է անել հակահրդեհային կանոնները պահպանելու համար:

Իհարկե, ամբողջ տեքստը պետք չի հրապարակել, 7-րդ կետում նշվում է. «Խստիվ արգելել վառարանների շահագործման համար որպես կպչան ավտոբենզին, նեֆրազ եւ այլ տեսակի դյուրավառ հեղուկների օգտագործումը: Դրանք պահպանել այլ հեղուկներից առանձին»: Այսինքն՝ սա զինվորական բարձրագույն պաշտոնյայի տված հրամանն է, եւ այս հրամանի պրիմիտիվ պահպանումը պարզապես թույլ կտար չունենալ այս դեպքը: Բայց մենք ի՞նչ ենք պարզում: Պարզում ենք, որ ոչ միայն բենզին է օգտագործվել (պիտի այսօր ընդունենք, որ մեր ունեցած բոլոր տվյալները նախնական են), այլեւ փորձ է արվել վառարան օգտագործելու համար: Ընդ որում՝ նախարարը զեկուցեց, որ վառարանները վառելու համար հատուկ այրիչներ են բաժանված եւ այլն, որպեսզի լրացուցիչ ինչ-որ բաների կարիք չլինի: 5-լիտրանոց տարայով (կրկին եմ ասում՝ նախնական, քննությունը մնացածը կպարզի) փորձ է արվել բացել, լցնել վառարանի մեջ, բնականաբար, երբ հետո արդեն բաց կրակ է եղել, այրվել է ոչ միայն վառարանը, այրվել է նաեւ բենզինը, հրդեհն անցել է վառարանը վառել փորձող սպային, որից հետո, կրկին նախնական տվյալներով, ինքնապաշտպանական բնազդից ելնելով, 5 լիտրանոց բենզինը շպրտվել է զորամասի կացարանի ուղղությամբ, ենթադրում ենք, բնականաբար, կամ մեծ հավանականությամբ՝ ոչ դիտավորյալ այդ իրավիճակում, որից հետո, պարզ է, թե ինչ է տեղի ունեցել: Հույս ունեմ, որ, իհարկե, նախաքննությունը, Գլխավոր դատախազությունը, Քննչական կոմիտեն կաշխատեն եւ ի հայտ կբերեն բոլոր հանգամանքները:

Բայց նաեւ ուզում եմ ասել հետեւյալը, որ երբ մենք նախորդ տարվա դեկտեմբերի 31-ին շրջայց էինք անում Զինված ուժերի տարբեր մարտական դիրքերով եւ ստորաբաժանումներով, այդ ժամանակ իմ հանձնարարականը Պաշտպանության նախարարին եւ պայմանավորվածությունը եղել է հետեւյալը. մեր ավանդական մոտեցումը, որ, այնուամենայնիվ, բանակում առկա խնդիրներին մի փոքր այլ կերպ պետք է վարվենք, պետք է ուղղակի դադարեցնենք, եւ այն ժամանակ ես հստակ հանձնարարական եմ տվել, որ կոմպրոմիսներ չեն լինելու: Նույնիսկ վիզուալ եթե ծառայությունը, կարգապահությունը պատշաճ իրավիճակում չէ, պետք է հետեւի կոնկրետ պատասխանատվություն: Այդ առումով ես որոշում եմ կայացրել հենց առավոտյան եւ 2-րդ բանակային կորպուսի հրամանատարին աշխատանքից ազատելու միջնորդություն եմ ներկայացրել Հանրապետության նախագահին: Հանրապետության նախագահն արդեն իսկ ստորագրել է որոշումը: Բայց նաեւ հանձնարարել եմ Պաշտպանության նախարարին, որ պետք է շատ կոնկրետ անհատական հետեւանքներ լինեն: Պարոն նախարար, զեկուցե՛ք, թե այդ առումով ինչ եք արել:

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյան

«Պարոն վարչապետ, զեկուցում եմ, որ զբաղեցրած պաշտոններից ազատվել են նաեւ 2-րդ բանակային կորպուսի շտաբի պետ- կորպուսի հրամանատարի տեղակալ, թիկունքի պետ - կորպուսի հրամանատարի տեղակալ, կորպուսի հրամանատարի տեղակալ մարտական հերթապահության գծով, այնուհետեւ N զորամասի շտաբի պետ, հրամանատարի տեղակալ, N զորամասի հրամանատարի տեղակալ թիկունքի գծով, N զորամասի ինժեներական ծառայության պետ, N զորամասի ինժեներասակրավորային վաշտի հրամանատար եւ Զինված ուժերի թիկունքի վարչության հրդեհային անվտանգության ծառայության պետ»:

ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթի նախաքննության ընթացքում հիմնավորվել է, որ Արմավիր քաղաքից դեպի Երեւան եւ հակառակ ուղղությամբ ապօրինի ուղեւորափոխադրումներ իրականացնող վարորդների գործունեությանը չխոչընդոտելու դիմաց ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնի ՊՊԾ դասակի առաջին ջոկի հրամանատար

Ա. Ս.-ն կարգավարի գործունեություն իրականացնող անձանցից պահանջել եւ ստացել է կաշառք:

Նախաքննությամբ պարզվել է, որ ապօրինի ուղեւորափոխադրումներն Արմավիրի ավտոկայանի տարածքում համակարգել են կարգավարի գործառույթներ իրականացնող Ս. Հ.-ն եւ Գ. Ե.-ն, որոնք մտերիմ հարաբերությունների մեջ են գտնվել ՀՀ ոստիկանության վերը նշված պաշտոնյայի հետ: Վերջինս, քաջատեղյակ լինելով Արմավիրի մարզի մի շարք վարորդների կողմից յուրաքանչյուր օր Արմավիրի ավտոկայանի հարակից տարածքից դեպի Երեւանի կենտրոնական ավտոկայան եւ հակառակ ուղղությամբ առանց համապատասխան լիցենզիայի առկայության ապօրինի ուղեւորափոխադրումներ իրականացնելու մասին, կաշառք ստանալու դիմաց չի արձանագրել վարչական իրավախախտումները:

Արդյունքում Ս. Հ.-ն եւ Գ. Ե.-ն 2021թ. դեկտեմբերից 2022թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում վարորդներից հավաքել եւ Ա. Ս.-ի պահանջով վերջինիս տվել են ընդհանուր 220.000 ՀՀ դրամ կաշառք, որի մի մասը վճարային տերմինալների միջոցով տարբեր օրերի փոխանցել են Ա. Ս.-ի էլեկտրոնային դրամապանակին:

Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար Ա. Ս.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.08.2003 թվականին, ուժը կորցրել է 01.07.2022թ.) 311-րդ հոդվածի 2-րդ մասով, Ս. Հ.-ին եւ Գ. Ե.-ին՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-րդ մասով:

Ա. Ս.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին, ում կողմից այն հաստատվել է, եւ նյութերն ուղարկվել են դատարան:

ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ

Հունվարի 19-ին՝ ժամը 10:50-ի սահմաններում, Երասխի ուղղությամբ տեղակայված մարտական դիրքում հակառակորդի կրակոցից հրազենային վիրավորում է ստացել ՀՀ ՊՆ N զորամասի զինծառայող Ե.Ծ.-ն:

Զինծառայողի վիճակը գնահատվում է ծանր: Դեպքի հանգամանքները լիարժեք պարզելու նպատակով տարվում է քննություն. այս մասին հայտնում է ՀՀ ՊՆ մամուլի ծառայությունը:

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ

Հունվարի 13-ին՝ ժամը 16:45-ին, «Վեդի» բժշկական կենտրոնից ոստիկանության Արարատի բաժին հաղորդում էր ստացվել, որ ծակած-կտրած վերքերով, սալջարդով ու մարմնի տարբեր մասերի բերվածքներով բուժօգնության է տեղափոխվել Նոր կյանք գյուղի 34-ամյա մի բնակիչ: Նա հայտնել էր, որ մեսաղյա ձող է մտել ոտքը:

Ոստիկանության Արարատի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ նա վնասվածքները ստացել էր գյուղի Արարատյան փողոցում ֆինանսական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ. Ոսկետափ գյուղի 23-ամյա բնակիչը դանակով երկու անգամ խփել էր 34-ամյա տղամարդու ոտքին:

23-ամյա երիտասարդը Ոսկետափ գյուղում հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է Վեդիի քննչական բաժին: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Վեդիի քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 18-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴՐՈՇԸ ՎԵՐՋԱՊԵՍ ՓՈԽԵՑԻՆ

Տավուշի մարզի Կիրանց եւ Ոսկեպար գյուղերի սահմանին՝ Հայաստան Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրին գտնվող բլրին տեղադրված եռագույն դրոշը պատռված էր: Սահմանագոտում Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը տեղադրվել էր մեկ տարի առաջ ՊՆ զինվորականների կողմից: Օրերս պատռված դրոշի փոխարեն նորն են տեղակայել: Այդ փոխարինումը պետք էր ավելի շուտ անել:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐՆ ԱՎԵԼԱՆԱԼՈՒ ԵՆ

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից հայտնեցին, որ դպրոցների տնօրենները մանկավարժներին հայտնել են, որ 2023թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտնելու այն որոշումը, որ հանրակրթական դպրոցներում պետք է դասավանդեն միայն բարձագույն կրթություն ունեցողները: Նոր ուսումնական տարուց դպրոցներում կարող են դասավանդել նաեւ բարձրագույն, ոչ մանկավարժական կրթություն ունեցողները, որոնք առվազն 5 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ ունեն եւ մասնագիտական վերապատրաստումների ընթացքում հավաքել են առնվազն 30 կրեդիտային միավոր: Որոշումը պետք է կիրառվեր դեռեւս 2018 թվականին, սակայն այն ժամանակ դրա կիրարկումը 5 տարով հետաձգվել է: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ մարզի 76 հանրակրթական դպրոցներում առկա է ուսուցիչների 27 թափուր հաստիք՝ Մաթեմատիկա, Քիմիա, Կենսաբանություն, Ֆիզիկա, Անգլերեն, Ռուսերեն, Պատմություն, Արվեստ, Բնագիտություն, Ինֆորմատիկա, Շախմատ, Տեխնոլոգիա, Երաժշտություն առարկաների գծով: Եթե նշված որոշումը գալիք ուսումնական տարվա մեկնարկից սկսի կիրառվել, Տավուշի մարզի հեռավոր, սահմանամերձ փոքր դպրոցներում շատ առարկաների ուսուցիչների թափուր տեղեր են առաջանալու: Սահմանամերձ փոքր դպրոցներում առարկաներ կան, որոնք 20 եւ ավելի տարի դասավանդվում են ուսուցիչների կողմից, որոնք, սակայն, չունեն բարձրագույն կրթություն, մանկավարժական տեխնիկում կամ քոլեջ են ավարտել: Ուսուցիչների ոչ բարձր աշխատավարձի պատճառով մանկավարժական բուհեր ավարտածների գերակշիռ մեծամասնությունը իր աշխատանքային կենսագրությունը սկսում է ոչ թե հանրակրթական դպրոցներում, այլ ուրիշ բնագավառներում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԵՐԴՐՈՒՄ

ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԵՐԿՈՒ ՔՈԼԵՋ ԿԱՐԴԻԱԿԱՆԱՑՎԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը եւ Արաքսիա Սվաջյանն ընդունել են Եվրոպական ներդրումային բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային ներկայացուցչության ղեկավար Մաչեյ Չուրայի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը քննարկվել են համագործակցության հեռանկարները, ընթացիկ եւ նախատեսվող ծրագրերը: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ողջունելով հյուրերին, կարեւորել է Եվրոպական ներդրումային բանկի հետ համագործակցությունը՝ ուղղված կրթության ոլորտի զարգացմանը: «Հաստատվել է «ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիր»-ը, որի գործողությունների պլանի հաստատումից հետո զարգացման գործընկերների հետ քննարկումներ ենք ունենալու եւ սկսելու ենք համագործակցության նոր փուլ ծրագրի իրականացման նպատակով»,- նշել է նախարարի տեղակալը՝ ավելացնելով, որ այս առումով ակնկալվում է Եվրոպական ներդրումային բանկի հետ համագործակցություն:

Արթուր Մարտիրոսյանը տեղեկացրել է, որ «ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիր»-ը մշակվել է հետեւյալ ռազմավարական ուղղություններով՝ համընդհանուր ներառականություն, սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում ՀՀ ամբողջ տարածքում, կրթության արդյունավետության բարձրացում: Ծրագիրն անդրադառնում է կրթության բոլոր մակարդակներին՝ նախադպրոցականից մինչեւ բարձրագույն կրթություն: Նախարարի տեղակալը նաեւ նշել է, որ գործողությունների պլանի հաստատման համար սահմանվել է եռամսյա վերջնաժամկետ:

Եվրոպական ներդրումային բանկի Հարավային Կովկասի տարածաշրջանային ներկայացուցչության ղեկավար Մաչեյ Չուրայը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ ընդգծել, որ ԵՄ-Հայաստան երկխոսության համատեքստում կրթության ոլորտն առաջնայիններից մեկն է. «Կրթության բոլոր ուղղությունները Կենտրոնական Եվրոպայում մեր բանկի ներդրումային գործունեության հիմնական ուղղվածություններից են: Կրթության ոլորտին մենք իսկապես մեծ ուշադրություն ենք դարձնում, տրամադրում ենք ոչ միայն ֆինանսական, այլեւ փորձագիտական աջակցություն»,- ասել է Մաչեյ Չուրայը եւ պատրաստակամություն հայտնել համագործակցելու լրացուցիչ ու շարունակական կրթության իրականացման, ինչպես նաեւ ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսուցման ուղղություններով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը ներկայացրել է հանրակրթության նոր չափորոշչի ներդրմամբ պայմանավորված բարեփոխումները, ինչպես նաեւ նախնական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտի առաջնային խնդիրներն ու զարգացման ուղղությունները:

Նշվել է, որ Եվրոպական միության աջակցության ծրագրերի շրջանակում դիտարկվում են Սյունիքում կրթական նոր մոդելի ներդրման եւ հանրակրթության նոր չափորոշչի տեղայնացման հարցերը: Անդրադարձ է եղել Եվրոպական ներդրումային բանկի հետ նոր համագործակցության մեկնարկին, որի շրջանակում նախատեսվում են Սյունիքի տարածաշրջանային եւ Գորիսի պետական քոլեջների վերանորոգում, արդիականացում եւ վերազինում: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարեւորել է Սյունիքի մարզի երկու քոլեջներում ներդրումային ծրագրերի շուրջ համաձայնության ձեռքբերումը՝ շեշտելով, որ նախնական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտը ռազմավարական կարեւոր ուղղություններից մեկն է:

Կողմերը քննարկել են Եվրոպական ներդրումային բանկի հետ հնարավոր այլ համագործակցության հեռանկարները:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՑԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Հայաստանում առաջին անհրաժեշտության սննդատեսակ համարվող հացի արտադրության ծավալները փոքր-ինչ նվազել են:

ArmLur.am-ը պաշտոնական վիճակագրական աղբյուրներից պարզեց, որ նախորդ տարվա հունվար-նոյեմբերին Հայաստանում արտադրվել է 238 հազար 821 տոննա հաց, մինչդեռ 2021 թվականի նույն ժամանակահատվածում արտադրվել է 240 հազար 7 տոննա հաց:

Այսինքն՝ հացի արտադրության ծավալները անցյալ տարվա 11 ամիսներին, 2021 նույն ժամանակահատվածի համեմատ, 0.5 տոկոսով է նվազել:

Ի դեպ, տեղեկացնենք, որ նույն ժամանակահատվածում մակարոնեղենի արտադրության ծավալներն են աճել 3 տոկոսով:

ArmLur.am-ը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ մեր հանրապետությունում անցյալ տարվա հունվար-նոյեմբեր ամիսներին արտադրվել է 4854 տոննա մակարոն, սակայն մակարոն արտադրողները խիստ մտահոգված են, որովհետեւ հայկական ողջ շուկան ողողված է դրսից ներկրվող մակարոնով, եւ տեղական արտադրողները չեն դիմանում մրցակցությանը: Նշենք, որ ռուսական արտադրության մակարոնը մեր շուկայում մեծ տեսակարար կշիռ ունի: Հայաստանում մակարոն արտադրելու համար տնտեսավարողները մեծ ծախսեր են անում, իսկ այն ներմուծողներն ավելի շատ են օգտվում: Արդյունքում տեղական արտադրողները չեն կարողանում իրենց ունեցածը սպառել կամ էլ այն իրացնում են ավելի էժան՝ այդպիսով մեծ վնասներ կրելով:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՀԱՆՁՆԵԼ

Անձի ֆունկցիոնալության գնահատման նոր համակարգի ներդրման շրջանակում փետրվարի 1-ից նախատեսվող գործընթացն իրականացնող մասնագետների առաջին խումբը հանձնել է քննություն ու ընդգրկվել անձի ֆունկցիոնալության գնահատման աշխատանքներում:

Հիշեցնենք, որ նախարարությունը ձեւավորել է անձի ֆունկցիոնալությունը գնահատող մասնագետների ռեեստր: Այն նախատեսված է բժիշկների, ինչպես նաեւ հարբժշկական ծառայություն մատուցող մասնագետների համար, որոնք, ծանոթանալով հաշմանդամություն ունեցող անձանց ոլորտում իրականացվող բարեփոխումներին, մասնավորապես՝ հաշմանդամության սահմանման նոր մոդելին, հնարավորություն կունենան իրականացնել իրենց աշխատանքները նոր համակարգով:

Ռեեստրում ընդգրկված մասնագետները մասնակցել են նախարարության, Եվրոպական միության SOCIEUX+ բաղադրիչի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի եւ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) աջակցությամբ՝ Աշխատանքի եւ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված շարունակական վերապատրաստման դասընթացներին, որոնց ընթացքում ձեռք բերած տեսական եւ գործնական գիտելիքը կիրառել են հաշմանդամության փորձնական գնահատման գործընթացում:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Կենտրոն, Ե.Կ ողբացու փողոց, 2/2 հասցեում գտնվող 272,7 ք.մ. ջերմային հանգույց եւ 0,0356 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 155000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 06.02.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով եւ, այնուհետեւ, յուրաքանչյուր աշխատանքային օր: Դասական փուլերում չվաճառված գույքը, բանկի հանձնարարականով, սակարկվում է հոլանդական եղանակով՝ մեկնարկային գների 10%-ի իջեցումով յուրաքանչյուր հաջորդ փուլին, բայց ոչ պակաս պատվիրատուի կողմից ներկայացված վերջնական հատման գնից: Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ.-ին:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

Գ

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների
պաշտոնական ինտերնետային կայք
http://www.azdarar.am

ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 17-ի N 174-Ն որոշման
Հավելված N 2-ով հաստատված Ձև

ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

այս դաշտերը լրացվում են հայտարարությունը ընդունողի կողմից	
հայտարարության նույնականացման համարը	հայտարարության ընդունման ամսաթիվը

1.	Հայտատուի տվյալները	<<Յունիբանկ>> բաց բաժնետիրական ընկերություն	
		ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը / իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ անվանումը	
		Ք. Երևան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5	www.unibank.am
		ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի հասցեն	իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ինտերնետային կայքի հասցեն (լրացվում է առկայության դեպքում)
		010/ 595555	unibank@unibank.am
		ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի հետադարձ կապի հեռախոսահամարները	ֆիզիկական կամ իրավաբանական անձի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեն (լրացվում է առկայության դեպքում)
2.	Հայտարարության իրավական հիմքը	Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մաս	
		այն իրավական ակտի անվանումը և հոդվածը, որով սահմանված է հայտարարություն ենթակայացնելու պահանջը	
3.	Հայտարարության անվանումը	Աճուրդի մասին հրապարակային ծանուցում	
		հայտարարության անվանումը (վերնագիրը)	
4.	Հայտարարության տեքստը	2023թ-ի փետրվարի 02-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ <<Յունիբանկ>> ԲԲԸ կողմից ք. Երևան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 1 լոտ՝ ոսկյա զարդեր 20,8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 288.000 ՀՀ դրամ: **Թիվ** 2 լոտ՝ ոսկյա զարդեր 29 գր. քաշով 750 հարգի, լոտի մեկնարկային գինը 514.000 ՀՀ դրամ: Թիվ 3 լոտ՝ ոսկյա զարդեր և ջարդոն 12,2 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 168.900 ՀՀ դրամ: Թիվ 4 լոտ՝ ոսկյա ջարդոն 127,3 գր. ընդհանուր քաշով, որից 13 գր. քաշով ոսկյա ջարդոնը 500 հարգի՝ 151.700 ՀՀ դրամ, 8,9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8,5 գր.) ոսկյա ջարդոնը 750 հարգի՝ 150.600 ՀՀ դրամ, 105,4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 103 գր.) ոսկյա ջարդոնը 585 հարգի՝ 1.426.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.728.600 ՀՀ դրամ: Թիվ 5 լոտ՝ ոսկյա ջարդոն 111,7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 108 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.500.000 ՀՀ դրամ: Թիվ 6 լոտ՝ ոսկյա զարդ 15,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 15 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 207.700 ՀՀ դրամ: Թիվ 7 լոտ՝ ոսկյա ջարդոն 5,4 գր. ընդհանուր քաշով, որից 1,8 գր. քաշով ոսկյա ջարդոնը 585 հարգի՝24.900 ՀՀ դրամ, 3,6 գր. քաշով ոսկյա ջարդոնը 500 հարգի՝ 42.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 66.900 ՀՀ դրամ: Թիվ 8 լոտ՝ ոսկյա ջարդոն 17,6 գր. ընդհանուր քաշով, որից 8,7 գր. քաշով ոսկյա ջարդոնը 585 հարգի՝ 120.500 ՀՀ դրամ, 5,5 գր. քաշով ոսկյա ջարդոնը 958 հարգի՝ 125.000 ՀՀ դրամ, 3,4 գր.քաշով ոսկյա ջարդոնը 500 հարգի՝39.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 285.200 ՀՀ դրամ: Թիվ 9 լոտ՝ ոսկյա ջարդոն 10,2 գր. ընդհանուր քաշով, որից 1,8 գր. քաշով ոսկյա ջարդոնը 750 հարգի՝ 31.900 ՀՀ դրամ, 8,4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 8,2 գր.) ոսկյա ջարդոնը 585 հարգի՝ 113.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 145.400 ՀՀ դրամ:**Թիվ 10 լոտ**՝ ոսկյա ջարդոն 30,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 30 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 415.400 ՀՀ դրամ: Թիվ 11 լոտ՝ ոսկյա ջարդոն 10,5 գր. ընդհանուր քաշով, որից 4,9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 4,8 գր.) ոսկյա ջարդոնը 500 հարգի՝ 56.000 ՀՀ դրամ, 5,6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 5,5 գր.) ոսկյա ջարդոնը 585 հարգի՝ 76.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 132.000 ՀՀ դրամ: Թիվ 12 լոտ՝ ոսկյա ջարդոն 6,2 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 85.800 ՀՀ **դրամ**: Թիվ 58 լոտ՝ ոսկյա ջարդոն 50,5 գր. ընդհանուր քաշով, որից 31,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 27,6 գր.) ոսկյա ջարդոնը 585 հարգի՝ 382.200 ՀՀ դրամ, 8,9 գր. քաշով ոսկյա ջարդոնը 958 հարգի՝ 202.100 ՀՀ դրամ, 9,8 գր. քաշով ոսկյա ջարդոնը 500 հարգի՝ 114.400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 698.700 ՀՀ դրամ: Թիվ 59 լոտ՝ ոսկյա ջարդոն և զարդեր 29,3 գր. ընդհանուր քաշով, որից 13,7 գր. քաշով ոսկյա զարդերը 585 հարգի՝ 189.600 ՀՀ դրամ, 5,8 գր. քաշով ոսկյա ջարդոնը 958 հարգի՝ 131.700 ՀՀ դրամ, 9,8 գր. քաշով ոսկյա ջարդոնը 500 հարգի՝ 114.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 435.600 ՀՀ դրամ: Թիվ 60 լոտ՝ ոսկյա ջարդոն 15,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 15,7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 217.400 ՀՀ դրամ: Թիվ 61 լոտ՝ ոսկյա ջարդոն 30,7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 28,2 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 390.500 ՀՀ դրամ: Թիվ 62 լոտ՝ ոսկյա զարդեր 7,9 գր. ընդհանուր քաշով, որից 3,5 գր. քաշով ոսկյա զարդը 500 հարգի՝ 40.800 ՀՀ դրամ, 4,4 գր. քաշով ոսկյա զարդը 585 հարգի՝ 60.900 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 101.700 ՀՀ դրամ: Թիվ 63 լոտ՝ ոսկյա ջարդոն 15,4 գր. ընդհանուր քաշով, որից 2,2 գր. քաշով ոսկյա ջարդոնը 500 հարգի՝ 25.600 ՀՀ դրամ, 8,4 գր. քաշով ոսկյա ջարդոնը 958 հարգի՝ 190.700 ՀՀ դրամ, 4,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 4,7 գր.) ոսկյա ջարդոնը 750 հարգի՝83.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 299.600 ՀՀ դրամ: Թիվ 64 լոտ՝ ոսկյա զարդ 4,2 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 58.100 ՀՀ դրամ: **Թիվ 65** լոտ՝ ոսկյա զարդեր 131 գր. ընդհանուր քաշով, որից 67,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 67 գր.) ոսկյա զարդը 585 հարգի՝ 927.800 ՀՀ դրամ, 25,1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 25 գր.) ոսկյա զարդը 585 հարգի՝ 346.200 ՀՀ դրամ, 38,4 գր. քաշով ոսկյա զարդը 875 հարգի՝ 797.600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 2.071.600 ՀՀ դրամ: **Թիվ** 66 լոտ՝ ոսկյա ջարդոն 53,3 գր. ընդհանուր քաշով, որից 26,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 25 գր.) ոսկյա ջարդոնը 500 հարգի՝ 291.800 ՀՀ դրամ, 26,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 25,5 գր.) ոսկյա ջարդոնը 585 հարգի՝ 353.100 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 644.900 ՀՀ դրամ: Թիվ 67 լոտ՝ ոսկյա ջարդոն և զարդ 47,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 38,2 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 528.900 ՀՀ **դրամ**: Թիվ 68 լոտ՝ ոսկյա ջարդոն 9,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9,7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 134.300 ՀՀ դրամ: Թիվ 69 լոտ՝ ոսկյա ջարդոն 6 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 83.000 ՀՀ դրամ: Թիվ 70 լոտ՝ ոսկյա ջարդոն 6,9 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 95.500 ՀՀ դրամ: Թիվ 71 լոտ՝ ոսկյա ջարդոն 24,6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 24 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 332.300 ՀՀ դրամ: Թիվ 72 լոտ՝ ոսկյա ջարդոն 17,1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 16,7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 231.200 ՀՀ դրամ: Թիվ 73 լոտ՝ ոսկյա զարդ 23,8 քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 329.500 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչև մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչև աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երևան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:	
		Ներկայացվում հայտարարության բովանդակությունը, իսկ եթե հայտարարության բովանդակությունը գերազանցում է 1000 անիշ, ապա այս դաշտում լրացվում է հայտարարության համառոտ բովանդակությունը, իսկ հայտարարության ամբողջական տեքստը ներկայացվում է կից նյութի տեսքով	
5.	Նշումներ հայտարարությանը կցվող նյութերի մասին		
		տեղեկություններ հայտարարությանը կցված նյութերի քանակի և հեռաչափեր մասին	
6.	Հայտարարության արդիականության ժամկետը	03-ը փետրվարի 2023թ.	
		նշվում է այն ժամկետը, որից հետո հայտարարությունը կորցրել է իր արդիականությունը և տեղափոխվում է կայքի արխիվային մաս	
7.	Հայտարարությունը տալու իրավասություն ունեցող անձի տվյալները	<Յունիբանկ> ԲԲԸ Ոսկու գրավով սպառողական վարկերի վաճառքի կոորդինատոր	
		7.1. հայտարարությունը տալու իրավասություն ունեցող անձի զբաղեցրած պաշտոնը (ֆիզիկական անձի կողմից չի լրացվում)	
		Լիազորված անձ Ինգա Հարությունի Կյուրեղյան	
		7.2. հայտարարությունը տալու իրավասություն ունեցող անձի անունը, ազգանունը և հայրանունը (ֆիզիկական անձի կողմից չի լրացվում)	
		008610867	06.06.16թ	006
		7.3. անձնագրի սերիան	7.4. անձնագրի տրման ամսաթիվը	7.5. ում կողմից է տրվել անձնագիրը

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

«ՓՈՔՐ ԵՐԿՐՆԵՐ ԱԿՈՒՄԲ»

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Հայաստանի չորրորդ նախագահ Արմեն Սարգսյանի հեղինակած նոր «The Small States Club» («Փոքր երկրների ակումբ») գիրքը հայտնվել է 2023 թվականի ամենաադասված 15 գրքերի շարքում: Ցանկը կազմել է հեղինակավոր Diplomatic Courier-ը՝ հարթակ, որտեղ քննարկվում են միջազգային հարաբերություններին, դիվանագիտությանը, տեխնոլոգիաներին, կլիմային, բիզնեսին առնչվող կարեւորագույն հարցերն ու ոլորտի հեռանկարները:

«The Small States Club» («Փոքր երկրների ակումբ») գիրքը, որը լույս կտեսնի 2023 թվականին, պատմում է այն մասին, թե ինչպես կարող են փոքր երկրներն իրենց հաստատուն ու վճռական դերակատարումն ունենալ միջազգային ասպարեզում:

«Ավելի փոքր չափերը թույլ են տալիս ունենալ արձագանքելու ավելի մեծ կարողություն, փորձարկումներ ու նորարարություններ անելու հնարավորություն, ինչպես նաեւ քաղաքական փոփոխությունները չափել շատ ավելի արագ, քան իրենց ավելի խոշոր գործընկերները: Իհարկե, փոքր լինելն ունի նաեւ բացասական կողմեր, որոնցից «նավարկությունը» միջազգային հարթակներում վերջին տեղում չէ, հարթակներ, որոնք ստեղծված են ու գործում են՝ ի շահ ավելի խոշոր երկրների: Ասում են՝ Սարգսյանի գիրքը մասամբ հուշագրություն է եւ մասամբ՝ հարգանքի տուրք Հայաստանին՝ երկիր, որն առաջիկա տարիների պարտադիր այցելությունների իմ ցանկում է»,- գրքի մասին այսպես է գրում հոդվածի հեղինակ Ջոշուա Հումինսկին:

15 BOOKS TO LOOK FORWARD TO IN 2023

The Small States Club: How Small Smart States Can Save the World

Armen Sarkissian | Hurst | June 2023

The former president of Armenia explores how comparably tiny political entities punch well above their weight on the international stage, arguing that smallness is a strength. Indeed, smaller scales allow greater responsiveness, ability to experiment and innovate, and measure political changes more rapidly than their larger, more ponderous counterparts. There are, of course, downsides to smallness, not the least of which are navigating an international stage that is designed for and benefits larger states. Sarkissian's book is said to be part-memoir and part-homage to Armenia, a country very much on my list of places to visit in the coming years.

About Joshua Huminski: Joshua C. Huminski is Director of the Mike Rogers Center for Intelligence & Global Affairs at the Center for the Study of the Presidency & Congress, and a George Mason University National Security Institute Fellow. He can be found on Twitter @joshuachuminski.

«The Small States Club» գրքի հրատարակիչ Hurst ընկերությունը գրքի մասին համառոտագրում նշում է, որ այն ավարտվում է Հայաստանի մասին պատումով. «Որպես կիսով չափ հուշագրություն, կիսով չափ մանիֆեստ՝ այն հուզիչ հայացք է աշխարհի ամենահին քրիստոնեական երկրին, որը միաժամանակ ներկայացնում է հնագույն քաղաքակրթություն, փոքր պետություն եւ համաշխարհային ազգ»:

ՋՈՀՎԱԾ ՋԻՆԾԱՌԱՅՈՂ

Ի՞ՆՉ Է ՊԱՏՄՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ

Երեկ մահացած 15 զինծառայողներից Ռոստոմ Ասրյանը Լոռու մարզի Հոբարձի բնակավայրից է: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Հոբարձի վարչական ղեկավար Կարեն Լալազարյանը:

Մեր զրուցակցի խոսքով՝ Ռոստոմ Ասրյանը տարի եւ մեկ ամսվա զինծառայող էր, ուներ քույր եւ եղբայր: Ընտանիքն ապրում էր նորմալ պայմաններում:

«Ինչ ասեմ, շատ լավ երիտասարդ էր, ինչքան դրական բնավորության հատկանիշ կա, ինքն ուներ.. Չգիտեմ…»,-ասաց նա:

Նշենք, որ գիշերը՝ Գեղարքունիքի մարզում տեղի ունեցած ողբերգական միջադեպից հետո, ինչի պատճառով ժամկետային 15 զինծառայող է մահացել, ArmLur.am-ի տեղեկություններով, իրավապահ համակարգի ներկայացուցիչներն այս պահին աշխատում են դեպքի վայրում, փորձում պարզել դեպքի հետ կապված բոլոր մանրամասները:

ArmLur.am-ը գրել էր, որ, ըստ իրավապահների առաջ քաշած նախնական վարկածի, վաշտի հրամանատարը բենզինը լցրել է վառարանի մեջ, ինչից հետո կրակից նաեւ ձեռքն է բռնկվել, ու վախենալով իրավիճակից՝ բենզինով լի շիշը շպրտել է տան մեջ, ինչից հետո էլ պայթյուն ու հրդեհ է բռնկվել:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԱՆԴԱՄ՝ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լիբանանի Այնճար գյուղի հոգեւոր հովիվ Հայր Մեսրոպ վարդապետ Թոփալյանը, որը բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, հունվարի 18-ին դարձավ Հայաստանի գրողների միության պատվավոր անդամ եւ գրական վաստակի համար ՀԳՄ մեդալի արժանացավ: Միջոցառմանը Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանն ասաց՝ ծանոթացել է հեղինակի «Դանիէլ Վարուժան՝ հոգեբանութեան ծիրէն ներս» գրքին, որում բազմաթիվ հարցերի պատասխաններ է գտել: «Սա հրաշալի գիրք է, եւ ես զարմացած եմ, որ գրված է համահայկական միջավայրում, սակայն գիտական աշխատանքներին պատշաճ չեն արձագանքել: Մենք կարծում ենք՝ ճանաչում ենք մեր սփյուռքահայ ստեղծագործողներին, սակայն բացթողումներ են լինում: Կան մեծանուն ստեղծագործողներ, սակայն նրանց անուններն ու ստեղծագործություններն այնքան էլ տարածված չեն»,-շեշտեց Միլիտոնյանը: Նրա խոսքով՝ Հայր Մեսրոպ վարդապետ Թոփալյանն ավելի քան 70 աշխատությունների հեղինակ է: Ըստ Միլիտոնյանի՝ նա մեծ ներդրում ունի հայ գրական, մշակութային, հոգեւոր ասպարեզների զարգացման գործում:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՂԹԱՆԱԿ

«Մեծ սաղավարտի» մրցաշարերի 21-ակի չեմպիոն Նովակ Ջոկովիչը դուրս եկավ Ավստրալիայի բաց առաջնության 1/16 եզրափակիչ: Նա 23-րդ անընդմեջ հաղթանակը տարավ այս մրցաշարում:

Աշխարհի 5-րդ ռակետը մրցեց աշխարհի 191-րդ ռակետ ֆրանսիացի Էնզո Կուակոյի հետ եւ առավելության հասավ չորս սեթում՝ 6:1, 6:7 (7:5), 6:2, 6:0: Պայքարը տեւեց 2 ժամ եւ 55 րոպե:

Սերբ թենիսիստի հաջորդ մրցակիցը կլինի բուլղարացի Գրիգոր Դիմիտրովը, որը 6:3, 6:2, 6:0 հաշվով պարտության է մատնել սերբ Լասլո Ջերեին: Ավստրալիայի բաց առաջնության մրցանակային հիմնադրամը 51,3 միլիոն դոլար է:

ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է ՌԵԿՈՐԴԸ

Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» բոսնիացի հարձակվող Էդին Ջեկոն չեմպիոն «Միլանին» խփած գոլի շնորհիվ գերազանցել է Թուրինի «Յուվենտուսի» նախկին հարձակվող, պորտուգալացի Կրիշտիանու Ռոնալդուի տարիքային ռեկորդը Իտալիայի Սուպերգավաթում:

Ջեկոն գոլի հեղինակ է դարձել 36 տարեկան եւ 307 օրականում. հաղորդում է իտալական Ա Սերիայի մամուլի ծառայությունը: Ռոնալդուն Իտալիայի Սուպերգավաթում գոլ էր խփել 35 տարեկան եւ 350 օրականում:

Հիշեցնենք, որ Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էր Ռիյադում տեղի ունեցած խաղում «Ինտերը» «Միլանին» հաղթել է 3:0 հաշվով եւ 7-րդ անգամ նվաճել Իտալիայի սուպերգավաթը:

● *Հունվարի 22-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Չարլին եւ շոկոլադի գործարանը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 15:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ապահովագրական ընկերությունը, առանց իմ համաձայնության, police.am-ից ներբեռնել է իմ խախտումների տեսագրությունները. արդյոք խախտվե՞լ է իմ իրավունքը:

Սուրեն Ռուստամյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ այլ իրավաչափ հիմքի առկայությամբ: Ապահովագրական ընկերության հետ պայմանագիր կնքելիս Դուք նրանց հայտնել եք Ձեր մեքենայի պետհամարանիշները եւ տեխնիկական անձնագրի սերիան, որպեսզի նա կարողանա կնքել Ձեզ հետ ապահովագրական պայմանագիր: Այսինքն՝ անձնական տվյալները Դուք ապահովագրական ընկերությանը տրամադրել եք հատուկ նպատակի համար՝ միայն Ձեզ հետ ապահովագրական պայմանագիր կնքելու համար, այլ ոչ թե որեւէ այլ նպատակների համար: Եվ ապահովագրական ընկերության կողմից առանց Ձեր թույլտվության Ձեր կողմից տրամադրված անձնական տվյալներն այլ նպատակով օգտագործելը, նոր անձնական տվյալներ հավաքելը, մշակելը եւ տարածելը համարվում է ապօրինի եւ խախտում է Ձեր իրավունքները:

Ըստ այդմ, Դուք նախեւառաջ կարող եք դատարանում ներկայացնել առարկություններ, որպեսզի այդ տեսանյութերը որպես ապացույց չօգտագործվեն դատարանում, քանի որ դրանք ձեռք են բերվել օրենքի պահանջների խախտմամբ: Կարող եք նաեւ ապօրինի անձնական տվյալների հավաքագրման վերաբերյալ դիմում-բողոք ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարության «Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն»՝ խնդրելով հարուցել վարչական վարույթ ապահովագրական ընկերության դեմ եւ նրան ենթարկել վարչական պատասխանատվության: Ավելին՝կարող եք համապատասխան հաղորդում ներկայացնել ոստիկանություն՝ պահանջելով հարուցել քրեական գործ, քանի որ ապօրինի՝ առանց օրենքով սահմանված կարգի եւ հիմքերի անձնական տվյալների հավաքագրումը, մշակումը եւ օգտագործումը համարվում է հանցավոր արարք:

Հարկ է նկատել, որ Ձեր վերաբերյալ առանց համաձայնության նման կերպ անձնական կամ ընտանեկան կյանքին վերաբերվող տվյալները հավաքագրելը հանդիսանում է խախտում, որի համար սահմանված պատասխանատվության չափը կազմում է 200.000-500.000 ՀՀ դրամ, ինչպես նաեւ քրեական պատասխանատվություն՝մեկից երկու ամիս կալանք: Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը եւ ՀՀ ոստիկանությունը պարտավոր են Ձեր դիմում-բողոքի հիման վրա հարուցել վարչական վարույթ, քննել բոլոր հանգամանքները, լսել նաեւ ապահովագրական ընկերությանը, որից հետո իրավախախտման կամ հանցակազմի հատկանիշներ պարզելու պարագայում՝ համապատասխան անձանց ենթարկել պատասխանատվության:

ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մինչ համապատասխան դիմում-բողոքներ ուղարկելն անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ապահովագրական պայմանագրում նշված են անձնական տվյալների օգտագործման վերաբերյալ որեւէ պայմաններ կամ կարգավորումներ, եւ եթե այո, ապա ինչպիսի:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Գործատուն վերջնահաշվարկիս գումարը ղակաս է հաշվարկել, ղահումներ է արել. ի՞նչ անեմ եւ ո՞ւմ դիմեմ:

Աննա Կարապետյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքից ազատվելու դեպքում ազատման օրը կամ ոչ ուշ, քան աշխատողի՝ նման պահանջ ներկայացնելուց հետո՝3-օրյա ժամկետում, գործատուն պետք է կատարի վերջնահաշվարկ եւ այն վճարի աշխատողին:

Վերջնահաշվարկի մեջ են ներառվում աշխատանքի ազատման օրվա դրությամբ աշխատած եւ չվարձատրված օրերի համար աշխատավարձի գումարները, չօգտագործված արձակուրդի համար վճարումները, աշխատավարձին հավասարեցված այլ բոլոր վճարումները: Հաշվի առնելով, որ վերջնահաշվարկի գումարը եւս աշխատողի համար հանդիսանում է եկամուտ, այդ գումարից ենթակա են հարկերի վճարումներ, որոնք հենց այն պահումներն են, որոնք կատարվում են գործատուի կողմից:

Իսկ եթե կարծում եք, որ հաշվարկները գործատուի կողմից սխալ են կատարվել կամ պահումները ավել են եղել, ապա կարող եք այդ մասին դիմում ներկայացնել գործատուին՝ խնդրելով ներկայացնել այն հաշվարկը, որը կատարել է պահումները կատարելուց եւ վերջնահաշվարկը կազմելուց: Գործատուից ստանալով հաշվարկը՝ կարող եք ինքներդ կատարել համապատասխան հաշվարկը կամ էլ դիմել ցանկացած հաշվապահի՝ պարզելու կատարված հաշվարկների ճշգրտությունը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե պարզեք, որ հաշվարկը սխալ է կատարված, եւ Ձեզ պակաս են վճարել վերջնահաշվարկը, ապա կարող եք դիմել գործատուին՝ պահանջելով վճարել պակաս վճարված վերջնահաշվարկը: Եթե գործատուն հրաժարվի վճարել կամ ցուցաբերի անգործություն, ապա պետք է դիմեք դատարան՝ վերջնահաշվարկի պակաս վճարված գումարը գանձելու պահանջով: Կարող եք պահանջել նաեւ, որ գործատուից գանձվեն տույժի գումարները, որը կազմում է յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.15%-ը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում

Պաշտպանության նախարարությունը հաղորդել էր, որ այս գիշեր հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի կացարանում:

Հրդեհի հետեւանքով կա 15 զոհ, երեք վիրավոր: Նախնական տեղեկություններով՝ վաշտի կացարանում հրդեհը վառարանից է առաջացել:

ArmLur.am-ը ներկայացնում է բացառիկ լուսանկարներ ՀՀ ՊՆ N զորամասի ինժեներասակրավորային վաշտի այրված կացարանից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.01.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: